# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
# ՔՆՆՈՂ ԱՆՁ

---

ք. Երևան 09.04.2021թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի**

**թիվ ՍՑ-ՆԳ-2021/86**

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 31.03.2021թ. թիվ 26/26-1/4797-2021 գրությամբ «Սերպանտին Ինժենիրինգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

**1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի 25.03.2021թ. թիվ 01/3693 գրության հիման վրա 31.03.2021թ. թիվ 26/26-1/4797-2021 գրությամբ նախաձեռնել է «Սերպանտին Ինժենիրինգ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

**2. <u>«Սերպանտին Ինժենիրինգ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Սերպանտին Ինժենիրինգ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Սերպանտին Ինժենիրինգ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/86 ընթացակարգի շրջանակներում 09.04.2021թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

**3. <u>Վանաձորի համայնքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 25.03.2021թ. թիվ 01/3693 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք Ձեզ, որ Վանաձորի համայնքապետարանի և «Սերպանտին Ինժենիրինգ» ՍՊԸ-ի միջև 2021 թվականի հունվարի 12-ին կնքված Վանաձորի համայնքապետարանի կարիքների համար բենզինի (ռեգուլյար) մատակարարման թիվ «ՀՀ ԼՄՎՔ ԳՀԱՊՁԲ-21/04» պայմանագրի համաձայն՝ «Սերպանտին Ինժենիրինգ» ՍՊԸ-ի կողմից պետք է իրականցվեր բենզինի մատակարարում:

Հիմք ընդունելով «Սերպանտին Ինժենիրինգ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ս. Կոշտոյանի դիմումը՝ պայմանագրից հրաժարվելու մասին,պատասխանատու ստորաբաժանման 16.03.2021 թվականի արձանագրությունը և թիվ «ՀՀ ԼՄՎՔ ԳՀԱՊՁԲ-21/04» պայմանագրի 2.1.7 կետի պահանջը Վանաձորի համայնքապետարանը 2021 թվականի ապրիլի 01-ից միակողմանի լուծում է 2021 թվականի հունվարի 12-ին կնքված «ՀՀ ԼՄՎՔ ԳՀԱՊՁԲ-21/04» պայմանագիրը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/86 ընթացակարգի շրջանակներում 09.04.2021թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

**4. <u>ՍՑ-ՆԳ-2021/86 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

ՍՑ-ՆԳ-2021/86 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Վանաձորի համայնքապետարանի և «Սերպանտին Ինժենիրինգ» ՍՊԸ-ի միջև 12.01.2021թ. կնքվել է թիվ «ՀՀ ԼՄՎՔ ԳՀԱՊՁԲ-21/04» ծածկագրով գնման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով գնորդին մատակարարել պայմանագրի N 1 Հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված տնտեսական ապրանքներ, իսկ գնորդը ՝ ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Տեղեկագրում (www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում) 24.03.2021թ հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը՝ հետևյալ բովանդակությամբ.

3. «...Հիմք ընդունելով «Սերպանտին Ինժենիրինգ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ս.Կոշտոյանի դիմումը՝ պայմանագրից հրաժարվելու մասին, պատասխանատու ստորաբաժանման 16.03.2021թ. արձանագրությունը և վերոհիշյալ պայմանագրի 2.1.7 կետի պահանջը Վանաձորի համայնքապետարանը 2021 թվականի ապրիլի 01-ից միակողմանի լուծում է 2021 թվականի հունվարի 12-ին կնքված թիվ «ՀՀ ԼՄՎՔ ԳՀԱՊՁԲ-21/04» պայմանագիրը»:

3. Պատվիատուն, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի դրույթով, Ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ներկայացրել է 25.03.2021թ. թիվ 01/3693 գրությամբ:

**5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 31.03.2021թ. թիվ 26/26-1/4797-2021 գրությունը, Վանաձորի համայնքապետարանի 25.03.2021թ. թիվ 01/3693 գրությունը՝ կից փաստաթղթերով, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, Վանաձորի համայնքապետարանի և «Սերպանտին Ինժենիրինգ» ՍՊԸ-ի միջև 12.01.2021թ. կնքվել է թիվ «ՀՀ ԼՄՎՔ ԳՀԱՊՁԲ-21/04» ծածկագրով գնման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով գնորդին մատակարարել պայմանագրի N 1 Հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված տնտեսական ապրանքներ, իսկ գնորդը՝ ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Տեղեկագրում (www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում) 24.03.2021թ հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը՝ հետևյալ բովանդակությամբ.

«...Հիմք ընդունելով «Սերպանտին Ինժենիրինգ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ս.Կոշտոյանի դիմումը՝ պայմանագրից հրաժարվելու մասին, պատասխանատու ստորաբաժանման 16.03.2021թ. արձանագրությունը և վերոհիշյալ պայմանագրի 2.1.7 կետի պահանջը Վանաձորի համայնքապետարանը ***<u>2021 թվականի ապրիլի 01-ից միակողմանի լուծում է 2021 թվականի հունվարի 12-ին կնքված թիվ «ՀՀ ԼՄՎՔ ԳՀԱՊՁԲ-21/04» պայմանագիրը»:</u>***

***<u>Պատվիրատուն, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի դրույթով, Ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ներկայացրել է 25.03.2021թ. թիվ 01/3693 գրությամբ:</u>***

Այսպիսով՝ Պայմանագրի 2.1.7 ենթակետի համաձայն՝ գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են <u>5</u> օրից ավելի:

Պայմանագրերի 8-րդ կետի 8.11-րդ ենթակետի համաձայն՝ վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Կարգի 45-րդ կետով սահմանվում է, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Վերը շարադրված փաստական հանգամանքների ուժով արձանագրում եմ, որ «Սերպանտին Ինժենիրինգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ***հիմքը Պատվիրատուի կողմից 2021 թվականի հունվարի 12-ին կնքված թիվ «ՀՀ ԼՄՎՔ ԳՀԱՊՁԲ-21/04» պայմանագիրը 01.04.2021թ. լուծելն է, մինչդեռ Պատվիրատուն, Ընկերությանն ուղղված 23.03.2021թ. գրությամբ հայտնելով, որ 01.04.2021թ.-ից լուծելու է պայմանագիրը, 24.03.2021թ.՝ դեռևս պայմանագիրը լուծված չլինելու պայմաններում, տեղեկագրում հրապարակել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը և 25.03.2021թ. թիվ 01/3693 գրությամբ Ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով, ուղարկել է լիազորված մարմնին, վերջինս էլ 31.03.2021թ. նախաձեռնել է «Սերպանտին Ինժենիրինգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ՝ առանց իրավաբանական նշանակություն ունեցող փաստն ի հայտ եկած հիմքի:***

Այս տեսանկյունից հարկ եմ համարում արձանագրել նաև հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի

Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է:

Միաժամանակ գնումների գործընթացի կազմակերպման կարգը սահմանող ՀՀ կառավարության 05.04.2017թ. N 526-Ն որոշումը հստակ կարգավորում է գնման գործընթացի մասնակիցների գործողությունների հաջորդականությունը՝ հստակ ժամկետներով:

Ընդ որում՝ համապատասխան ընթացակարգային ժամկետի սահմանումը չի կարող ինքնանպատակ լինել. տվյալ ընթացակարգային ժամկետի սկիզբը իրավաստեղծ մարմինը կապել է որոշակի իրավաբանական նշանակություն ունեցող փաստի հետ, և հետևաբար ցանկացած ընթացակարգ, որը կնախաձեռնվի դեռևս տվյալ ընթացակարգային ժամկետի հոսքը պայմանավորող փաստի ի հայտ չեկած լինելու պայմաններում, ինքնին կազդի ամբողջ ընթացակարգի իրավաչափության վրա՝ անկախ այն հանգամանքից, թե հետագայում ընթացակարգը նախաձեռնելուց հետո ինչպիսի հանգամանքներ կարող են ի հայտ գալ:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Վերոնշյալ իրավակարգավորման համատեքստում, ինչպես նաև անդրադառնալով Կարգի 45-րդ կետով և 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված ընթացակարգային ժամկետի պահպանման և ժամկետի հոսքի սկիզբը ճիշտ հաշվարկելու իրավաստեղծ մարմնի նպատակին՝ պետք է արձանագրել, որ այն չի կարող ինքնանպատակ լինել, քանի որ ցանկացած տնտեսավարող սուբյեկտ, ում հետ կնքված պայմանագրի լուծման հետևանքով պայմանագրի մյուս կողմը հիմքերը կարող է ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ նախաձեռնելու համար, ունի լեգիտիմ ակնկալիք առ այն, որ այդպիսի գործընթաց չի նախաձեռնվի իր նկատմամբ

այնքան ժամանակ, քանի դեռ ինքը պատշաճ չի ծանուցվել պայմանագրի միակողմանի լուծման մասին:

Նման պայմաններում գտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել «Սերպանտին Ինժենիրինգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

## Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 31.03.2021թ. թիվ 26/26-1/4797-2021 գրությամբ «Սերպանտին Ինժենիրինգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**Գնումների հետ կապված**
**բողոքներ քննող անձ՝** **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**